<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲ Ընկերության Հոգնածության Ռիսկի Կառավարման Քաղաքականություն

Որպես թռիչքների անվտանգության շարունակական բարելավման հանձնառություն, <<Հայաէրոնավիգացիա>> ընկերությունը պարտավոր է սահմանել և կառավարել հոգնածության հետ կապված ռիսկերը:
Հոգնածության Ռիսկի Կառավարումը (Այսուհետ՝ ՀՌԿ) վերաբերում է միայն ՕԵՍ օպերացիոն գործընթացներում ներգրավված օպերացիոն անձնակազմին:
Ընկերության գործունեության այլ բաղկացուցիչների նկատմամբ կիրառվում է հոգնածության ռիսկի կանոնակարգման այլ գործառույթներ:
Հոգնածության ռիսկի կառավարման գործընթացները օգտագործվում են հոգնածության վտանգների վերհանման, դրանց գնահատման, վերահսկման ու մեղմման համար: Հոգնածության ռիսկի կառավարման ուղեցույցները պետք է բավարարեն սահմանված անվտանգության նպատակների ապահովվածությունը: Համաձայն ընկերության անվտանգության քաղաքականության, ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հոգնածության ռիսկի կառավարման նպատակով ապահովել բավարար միջոցներ,
- Ապահովել բավարար մարդկային ռեսուրսներ աջակցելու հերթափոխների համակարգված կազմմանը, ինչը թույլ կտա պահպանել հոգնածության ռիսկերը թույլատրելի սահմաններում,
- Հերթափոխներից հետո վերականգնվելու համար, ՕԵՍ կարգավարներին ապահովել հանգստի (քնի) բավարար (համապատասխան) հնարավորություններ,
- Ստեղծել հոգնածությամբ պայմանավորված վտանգների և միջադեպերի զեկուցման ազատ ու արդար միջավայր,
- Ապահովել հոգնածության ռիսկի կառավարման ՕԵՍ կարգավարների, նրանց անմիջական ղեկավարների և այլ ներգրավված օժանդակ անձնակազմի ուսուցում,
- Ցուցադրել ՀՌԿ գործունեությանն ակտիվ ներգրավվածություն և ըմբռնում,
- Ապահովել ղեկավարության պատասխանատվության տիրույթում գտնվող հոգնածության ռիսկերի պատշաճ կառավարվածությունը և վերահսկումը,
- Անցկացնել կանոնավոր խորհրդատվություններ ՕԵՍ կարգավարների հետ ՀՌԿ արդյունավետության վերաբերյալ և ցուցադրել շարունակական բարելավմանը ուղղված պատրաստակամություն:

ՕԵՍ կարգավարները պարտավոր են՝

- Ապահովել բավարար հանգիստ (քուն) օգտագործելով տրամադրված հանգստի ժամանակը հերթափոխից առաջ և աշխատանքի ժամանակ,
- Մասնակցել հոգնածության ռիսկի կառավարման ուսուցմանը,
- Ներկայացնել զեկույց հոգնածության հետ կապված վտանգների և միջադեպերի մասին,
- Գործել հոգնածության ռիսկի կառավարման քաղաքականությանը համապատասխան,

Հոգնածության ռիսկի կառավարումը պետք է դիտվի որպես ընդհանուր գործունեության հիմնական մաս, քանի որ այն ապահովում է օպերացիոն աշխատանքի անվտանգություն և արդյունավետություն ու բարձրացնում է անձնակազմի մոտիվացիան:

“Հայաէրոնավիգացիա” ՓԲԸ Գլխավոր Տնօրեն	Անձնակազմի ներկայացուցիչ (ներ) Արհմիության նախագահ (ներ)
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ